12.08.24 - 23.08.24
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Երևանի պետական համալսարանին առընթեր գործող Օպտիկների միջազգային կազմակերպությունների՝ «Optica»-ի և «SPIE»-ի ուսանողական միացյալ մասնաճյուղը («YSO Student Chapter») ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ **ս.թ. օգոստոսի 12-23-ը Երևանում** կազմակերպում է Օպտիկայի և ֆոտոնիկայի ժամանակակից կիրառությունների միջազգային 1-ին քոլեջը («MAOP2024»):

«MAOP2024»-ը հովանավորվում է «YSO»-ի «Optica»-ի «Հատուկ ծրագիր», ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության դրամաշնորհների շրջանակում: Աջակիցների թվում են ԵՊՀ-ն, «SPIE»-ը և «THORLABS»-ը: Այն Երևանի պետական համալսարանի օպտիկայի լաբորատորիաներում մեկշաբաթյա գործնական պարապմունքների և դրան հաջորդող մեկշաբաթյա ներկայացումների, պանելային քննարկումների համադրություն է:

Աշխարհի ավելի քան 20 գիտահետազոտական հաստատություններից հրավիրված բանախոսները կներկայացնեն իրենց ելույթները հետազոտական տարբեր թեմաների շուրջ: Քոլեջի շրջանակում հատուկ բաժին է հատկացվելու ակադեմիական և արդյունաբերական տեսանկյունից մասնագիտական զարգացման դասախոսություններին:

Ուսանողները հնարավորություն կունենան իրենց հետազոտությունները ներկայացնելու բանավոր և ստենդային զեկուցումներով:

«MAOP2024»-ը նպատակ ունի ստեղծելու անվտանգ և ազատ տարածք ամբողջ աշխարհի գիտնականների համար՝ ներկայացնելու օպտիկայի և ֆոտոնիկայի վերջին հետազոտությունների արդյունքները:

ՀՀ քաղաքացիների և բուհերի մասնակիցների համար ծրագրին մասնակցությունն անվճար է, իսկ այլ մասնակիցների համար արժեքը 120.000 ՀՀ դրամ է:

Գրանցումը բաց է մինչև **օգոստոսի 1-ը:**

Գրանցվել հետևյալ հղումով։

Ծրագրի մանրամասները՝ այստեղ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am